

633 . 5 .  
15 - 27

7906

1925

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՏԻ ԲԱՐԲԱԿԻ ԿՈՄԻՏ

(182)

Դա Հրակարութի  
Գրադարան



ԻՆՉ Ե ՅԱՐԿԱՎՈՐ ԻՄԱՆԱԼ  
ԲԱԼՄԱԿԱԳՈՐԾԻՆ ԶՐԻ ՄԱՍԻՆ,  
ՂՐՊԵՍՁԻ ԱՏԱՆԱ ԼԱՎ ԲԵՐՔ

2002

2011

633.5  
Մ-27

Ինֆինետ գ. ՄԱՆՈՒՅՑԱՐՈՎ

633.5

Վ-27

մց



630  
73-ԱՀ

ԻՆՉ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ԻՄԱՆԱԼ ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԻՆ

ԶՐԻ ՄԱՍԻՆ, ՎՈՐՊԵՏԱԶԻ ՍՏԱՆԱ ԼԱՎ ԲԵՐՔ

Խնդիրներ Գ. ՄԱՆՈՒՉԱՐՈՎ

Ռուսերենից թարգմանեց Ա. ՈՀԱՆԵՍՅԱՆ

1003  
1004



Թիֆլիս

Հայաստակական Ազգակովկանական համբակի Կոմիտեի

1925

088  
31-67

22557-60

Թիֆլիս, տպարան «Զարիա Վուտոկ»-ի Ս. Ցուլուկիձեյի փ. № 4:  
Գլավլիտ № 598—Տիրաժ № 3.000—Պատվեր № 1584.

ԻՆՉ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ԻՄԱՆԱԼ ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԻՆ  
ԶՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՊԵՍԶԻ ՍՏԱՆԱ ԼԱՎ ԲԵՐՔ

Յուրաքանչյուր գիտակցող գյուղացի պետք և հաշվի առնի  
նախ և առաջ, թե իրեն պատկանող հողի վրա այս կամ այն վար  
ու ցանքսի համար կբավականանա արդյոք այն ջրի քանակու-  
թյունը, վորով ոգտվում և նա բնականաբար իր ցանքսի համար:

Բայց բավական չե միայն այդ իմանալը, վորովհետև միե-  
նույն ջրի քանակությամբ կարելի և ջրել զանազան ցանքսերի  
տարածություն և ստանալ զանազան արդյունք միենույն ջրի քա-  
նակության շնորհիվ, նայած թե ինչ ցանքսի համար և գործա-  
գրում գյուղացին իր հողը: Գլխավորապես այս պետք և աչքի  
առաջ ունենալ, վորովհետև մեզ մոտ անդրկովկասում ջրի պակա-  
սությունը զգացվում և ամառվա ամիսներում: անդրկովկասում  
գյուղատնտեսության մեջ բոլոը ջրվող մշակումներից, ամենից  
շատ ամառվա ամիսներում ջուր պահանջողներն են՝ բամբակը,  
չալթիկը և բոստանները: Բոլոը մշակումներից, վորոնք ամառը  
ջուր են պահանջում, բամբակը պետք և հաշվել ամենաձեռնտուն,  
վորովհետև նա ամենից քիչ և պահանջում ջուրը և ամենից ար-  
գյունավետն ե: Վորպեսզի պարզ լինի այս, վերցնենք որինակ-  
յենթաղրենք, թե գյուղացին ունի յերկու որավար հող, վորի  
վրա նա կարող և ցանել ամառային մշակումներ, իսկ նրա բաժին  
ջուրը այնքան և, վոր նա կարող է ջրել միայն կես որավար հող,  
ցանքած չալթիկով. այս գեպքում նա կունենա միայն կես որա-  
վար չալթիկ և կըստանա արդյունք 50—60 մանեթ. իսկ յեթե  
նա ցանե բամբակը, նա կարող է ցանել յերկու որավար, վորով-  
հետև բամբակը պահանջում և չորս անդամ քիչ ջուր քան չալ-  
թիկը, և ստանալ 350—400 մանեթ:

Այդպիսի շատ որինակներ կարելի յե բերել, վորոնք կարող  
են ապացուցել, վոր ավելի ձեռնտու և ամառվա ջուրը ոգտագոր-  
ծել բամբակի համար, և միայն հնար յեղածին չափ այդ ջրի մի  
վորոշ մասը կարելի յե հատկացնել այնպիսի խոռոչերի (բույսերի)

համար, վորոնք պարաբռեցնում յեն հողը, ինչպիսին յեն կապույտ առույտը (լուզերի), յեռնջա և սրանց նման բույսերը:

Բայց բավական չե, վոր յուրաքանչյուր գյուղացի ինքն իրան վորոշի, թե ինչպիս ոգտագործի ունեցած ջուրը միայն իր տնտեսության համար, այլ կարևոր և և անհրաժեշտ, վոր ջրի հարցը յենթարկվի քննության և վորոշման ամբողջ գյուղի հասարակության (գյուղացիների), վորպեսզի գյուղին պատկանած ջուրը սանհնալավ և կանոնավոր ձևով բաժանվի բոլոր ցանքսերը ջրելու տեսակետից, վոր ապագայում վոչ մի ցանքու չմնա անջուր:

Յուրաքանչյուր գյուղացի պետք և գիտակցաբար վերաբերվի և մտածի, վոր միրաբները և ջվարները (հերթով ջուր բաժանողները) ընտրվեն ազնիվ մարդիք և լավ իմացող այդ գործը, հակառակ գեղքում գյուղացու բոլոր հաշիվները կոչնչանան, վորով հետի ջրի կանոնավոր բաժանումը լավ չի լինի կատարված:

Նախ և առաջ հարկավոր և լավ հաշվի առնել ջրի քանակնելունը բոլոր ցանքսերի տեսակետից և կարևոր և մտածել վոր այն ջրի քանակությունը, վորը հասարակոր և արտահանել գետից մեկ կամ մի քանի գյուղերի համար միենույն ջրանցքով, կարելի լինի հասցնել մինչեւ ցանքսերը իր ժամանակին և քիչ կորուսուով:

Ի՞նչ է հարկավոր անել սրա համար:

Աշնանային ջրելուց անմիջապես հետո, նախորսք մինչև գարնանային ջրել սկսվելը յուրաքանչյուր տարի հարկավոր և հոգս տանել վրապեսզի ջրանցքը և նրան կից ամեն ինչ լավ մաքրված և լավ գրության մեջ լինի:

Իհարկե, ջրանցքի վերաբերմամբ հոգսը պետք և տարվի բուլոր գյուղացիների կողմից, և յուրաքարչյուր գյուղացի պետք և գիտակցաբար վերաբերվի ջրանցքի նորոգման գործին այնպես, ինչպես նա վերաբերքում և իր սեփական հողի մշակման:

Ով խուսափում և ջրանցքի նորոգման գործից և անձամբ չի աշխատակցաւմ նրան հուսալով, վոր նրա տեղ կաշխատեն հարկաները, նա զրանով դողություն և կատարում գեղի ուրիշի աշխատանքը, իսկ այն գյուղը, վորի գյուղացիները համերաշխ չեն աշխատում ջրանցքի նորոգման գործում, միշտ պետք կը զգա ջրի և նրա ցանքսերը կը իշանան ջրի պակասությունից:

Յուրաքանչյուր գյուղացի պարտավոր և իմանալ հետեւալ՝

Յեթե ջրանցքի սկզբի մասը չի նորոգված և չի արված այն, ինչ հարկավոր և նախապես՝ այդ դեպքում գաշտային աշխատանքների ամենածանր ժամանակ նա ստիպված կը լինի թողնել իր աշխատանքը և հարկաների հետ միասին վազել կարգի բերելու այն, ինչ վոր չի արված իր ժամանակին. այդպիսով նա կորցրած կը լինի իր ամենաթանգ ժամանակը, իսկ ցանքսը կարող և փշանալ ջրի պակասությունից:

Յեթե ժամանակին ջրանցքը չի մաքրված և չեն ծածկված ջրանցքի այն մտակը, վորտեղից ջուրը կարող և արտահոսել, յեթե չեն մաքրված ջրանցքի խողովակները կամ ուրիշ նրան վերաբերվող մտակը, այդ վեպքում ջրի նույնիսկ մի քառորդն անգամ տեղ չի հասնի և ջուրը չի բավականանալ ցանքսերի համար:

Այս թե ինչ և ստացվում այն գեղքում, յերբ գյուղացիները ժամանակին չեն հեռացնում ջրանցքի բոլոր թերությունները: Գաշտային ամենաթունդ աշխատանքների ժամանակ և յերբ ցանքսերը վիճանում են ջրի պակասությունից, գյուղացիները բաներով ստիպված են վազել նորոգելու ջրանցքի գլխի մասի այն պակասությունները, վորի մասին նրանք ժամանակին չեն մտածել մինչդեռ այն ջուրը, վորը պետք և հոսեր ջրանցքով գեղի ցանքսերը, այդ թերությունների պատճառով չի կարողանում մտնել ջրանցքը:

Բայց լինում և և պեղի վատ այն ժամանակ, յերբ ջրանցքը մաքրված չե և չի կարողանում պարունակել ջրի այն քանակությունը, վորը անհրաժեշտ և ցանքսերի համար: Այս կատարյալ գերազգություն և, վորովհետեւ, այս գեղքում ջրանցքի մաքրումը մինչև հետեւալ տարի միանգամայն անհնարին և:

Մյուս կողմից յեթե ջրանցքի քանդված մտակը և խողովակները նորոգված չեն, այդ գեղքում ջրի մի մասը, գուրս և հոսում ջրանցքից և փոխանակ տեղ հասնելու և ջրելու ցանքսերը, ծածկում և ջրանցքի աջ և ձախ կողմի տարածությունը և ձանիճ դարձնում նրան:

Կան այնպիսի անհոգս գյուղացիներ, վորոնք վոչ միայն չեն ուղղում ջրանցքի պակասությունները, այլ և ջրի կարեռության ժամանակ տեսնելով, ինչպես ջուրը ապարդյուն դուրս և հոսում ջրանցքից, վոչ մի միջոց չեն ձեռնարկում և ուշադրու-

թյուն չեն գարձնում, ինչպես իզուր հոսում և այդ ջուրը, վորք կազմում և հաջողության միակ միջոցը:

Քիչ ջուր չի հոսում և մանր արխերից (ջրանցքներից) դուրս, վորոնցով բաժանվում և ջուրը դաշտերում: Վորպեսպի այդ լինի, հարկավոր և այդ մանր ջրանցքները նույնպես մաքրել և ամրացնել նրանց ափերը և հետագայում հետեւ վոր ջրանցքների սկզբնական տեղերը լավ փակված լինեն, յերբ վերջանում և ջրելու շրջանը:

Լաւ իմացիր, բամբակագործ, վոր ջրի վերաբերմամբ հարկավոր և լինել խնայող, վոչ թե միայն քո ցանքսի վերաբերմամբ, այլ և հարևանների, մանավանդ քեզանից ներքեւ զբանված զյուղերի վերաբերմամբ: Յեթե նույնիսկ ջրի քանակությունը առատ է, այնուամենայնիվ գուշաբառ ես ինայող լինել գեպի ջուրը, վորովհետեւ հավառակ դեպքում գուշաբառ հասցրած կլինես քո հարևաններին և ներքեւ գտնվող գյուղերին, վորոնց զրկած կլինես զրանով մի կտոր հացից:

Հարկավոր և նորոգել և մաքրել վոչ միայն ջրանցքները, այլ և կարեւոր և նախորոք մաքրել և ընթացք տալ խանդակներին (արխերին), վորովհետեւ յեթե այդ չանել ջրի ընթացքը այդպիսով կը կապվի, ջուրը կծածկի ամբողջ տարածությունը, վորը միանալով ներքույին մյուս ջրերի հետ (грунтовые воды) կճանձացնե այն տեղերը, վորոնք մի ժամանակ լավ հող եցին ներկայացնում:

Բայց քո ցանքսերի ջրելը կապված և վոչ միայն նրանից, թե ինչքան ջուր և հասնում քեզ այլև նրանից, ինչ միջոցով և յերբ ես գուշում քո դաշտը, ինչպես ես պատրաստում դաշտը ջրելու համար կամ ինչ ես անում ջրելուց հետ:

Ջրելու միջոցները շատ յեն, բայց մենք կխօսենք այդ միջոցներից միայն յերկուսի մասին. այժմնքն թե ինչպես ջրել հեղեղելով (ընկղմելով), արդյոք ամբողջ դաշտը, թե ակոսների միջոցով:

Առաջին միջոցը կատարվում և հետեյալ ձեռվ.

Ամբողջ դաշտը պետք է բաժանել մանր հարթած տարածությունների (площадки), վորոնց պետք և շրջապատել հողի բարձերով (валики), վորպեսպի խնայողաբար լինել գեպի ջուրը և իզուր չժախսել նրան, հարկավոր և նախ և առաջ, վոր այդ

հարթած տարածությունները լինեն վոչ մեծ, վորովհետեւ մեծ տարածությունը դժվարությամբ և ջրվում հավասարապես. և յերկրորդ՝ կարեւոր և, վոր դաշտը լինի լավ հարթացրած, վորպեսպի ջուրը հավասարապես ծածկի ամբողջ մակերեսույթը, հակառակ գեպքում ջուրը լցնելով փոսերը անկարող կլինի ջրել թմբերը և կոհակները և յերրորդը՝ հարկավոր և, վոր յուրաքանչյուր մանր հարթած տարածությունը բարեխիղձ կերպով լինի շրջապատված հողից շինված բարձերով թե չե ջուրը դուրս կդաշտից և հեղեղելով հարեան հողերը և մանապարհները կառաջացնի ճահիճները:

Այսպիսով, յերբ դաշտը, պատրաստված կը լինի ջրելու համար, կարելիյէ թողնել ջուրը ջրանցքից գեպի դաշտը:

Առհասարակ մեզ մոտ անդրկովկասում ջրելը կատարվում և այս ձեռվ:

Սացնենք ջրելու երկրորդ ձեռին, վորը կատարվում և ակոսների միջոցով հետեյալ կերպով: Բույսերի շարքերի մեջ թորիսով (օկոչնիկ) վորվում են ակոսներ. իսկ ջրանցքի յերկարությամբ (կողքին) զութանով փորվում և խանդակ, վորի ափերը բանով ամրացվում են, այս խանդակը համուռմ և ակոսների ծայրերին. յերբ այս ամենը՝ պատրաստ և պետք բացել ջրի ընթացքը գեպի խանդակը և հետզհետեւ ըստ կարգի ջրել բոլոր ակոսները, բայց այնպես, վոր ջուրը չծածկի ակոսների աչ և ձախ բարձունքները:

Ակոսների երկարությունը լինում և զանազան, նայած հողի ջուր ծծելու ընդունակության: Յեթե հողը շատ և ծծում ջուր այն ժամանակ ակոսների յերկարությունը պետք և լինի վոչ ավել 30 սամենից, յեթե այդ ընթունակությունը միշակ և 60 սամեն, իսկ յեթե քիչ և մինչեւ 100 սամեն:

Ակոսների խորությունը պետք լինի  $2\frac{1}{2}$  վերջոկից մինչեւ 6 մերչոկ, խոր ակոսները ավելի ծեռնոտու յեն: Բույսերի միջի տարածությունը, վորի վրա փորվում են ակոսները, լինում և  $3\frac{1}{4}—1\frac{1}{2}$  արշին: Այս ձեռվ ջուրը ավելի յե տնտեսվում քան թե առաջին ձերի միջոցին, յերբ հեղեղվում և դաշտը, վորի ժամանակ ջուրը գոլորշիանում և մեծ քանակությամբ, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ կատարված փորձերը:

Որինակ, յեթե զու և քո հարեանը ունեք միննույն քանա-

կությամբ ջուր, դու ջրում յես դաշտը ակոսների միջոցով, իսկ քու հարեանը հեղեղում ե իր գաշտը այդ տեղքում, դու կարող ես ջրել 1/2 որավար, իսկ քո հարեանը միմիայն մեկ որավար:

Բայց ակոսների միջոցով ջրելը կարելի ե այն գեպքում, յերբ ցանքսը լինում ե շարքերով և վորովհետեւ, շարքերով կատարված ցանքսը տալիս ե ավելի բերք, հետեարար դու այս դեպքում ստանում ես ավելի շատ ոգում ե քիչ ջուր ես ծախսում ջրելու համար:

Յեթե ուզում ես իմանալ թե ինչու շարքերով կատարված ցանքսը ավելի ոգտավետ ե, քան թե ոչ շարքերով կատարած ցանքսը, կարող ես կարգալ մի փոքրիկ գիրք հետեյալ վերնագրով «ի՞նչու շարքերով ցանքսը լավ ե խառն ցանքսից»: Այս գիրքը կարող ես ստանալ բամբակի գործարանում կամ հողագետից (ագրոնոմից): Այդպիսով յուրաքանչյուր լավ բամբակագործ պարտավոր ե գիտենար, վոր պարարտ բերք և խնայողաբար ջրի ծախսելը նա կարող է ձեռք բերել շարքերով ցանքսի միջոցին, վորով ջրի քիչ գործածություն ե ստեղծվում, և ջուրը բավականանում ե ցանքսի համար, ուրեմն նա պետք ցանքս անե շարքերով և ջրել դաշտը ակոսների միջոցով:

Բայց դաշտը ջրելուց հետո զյուղացին չպետք դրանով բավականանա և սպասե հետեյալ ջրելուն: Այն ջուրը, վորով բամբակագործը ջրում ե իր դաշտը, ամբողջ քանակությամբ չի ոգտագործում, վորովհետեւ նրա խոշոր մասը գոլորշիանում ե և կորչում: Այս գրախտությանը կարելի ե ոգնել: Առհասարակ ջրելուց մի քանի որ հետո, նողը սկսում ե չորանալ և տրաքտրաքում և առաջանում են խոր ձեղքեր հողի մեջ և այն ջուրը, վորը գտնվում ե հողի տակ այդ ձեղքերի միջոցով սկսում ե գոլորշիանալ և պետք լինում նորից ջրելու դաշտը: Վորպես զի այդ վիճի հարկագոր ե վոր տաշտի մակերեսույթը (յերեսը) լինի փափկացրած և չորությունից առաջացած հողի գունդերը լինին ժըրված, զրա համար ջրելուց մի քանի որ հետո, յերբ դաշտը չորանում ե և առաջանում ե չոր կեղե, հարկագոր ե փշքել թորխով այդ չոր կեղե և փափկացնել հողը, յեթե այդ չկատարվի հողի մեջ գտնված ջուրը կը գոլորշիանա և նորից պետք կին ջրել տաշտը:

Հողի փափկացման ոգտակարության մասին դու կարող ես

կարդալ ավելի լնդարձակ մի ուրիշ գրքի մեջ, վորի վերնագիրն ե «Ինչու ե կարեոր և ինչումն ե հողի փափկացման ոգտակարությունը բամբակի վերաբերմամբ».

Հողի փիբումը ավելի հաջող ե կատարվում շարքերով ցանքսի միջոցին, վորը ձեռք ե բերվում վարելով շարքերի միջի տարածությունը՝ վորով վոչնչացվում են ի միջի այլոց և ավելորդ խոտերը և բույսերը (կարգա գրքույթը «Կոփկ ավելորդ բույսերի գիմ»): Այստեղից կարելի յե անել այն յեղակացությունը, վոր բամբակագործը փափկացնելով շարունակ հողը իր դաշտում ավելի քիչ և ջրում, քան հարեանը, վորը այդ չի անում:

Մի քանի բամբակագործներ սովորություն յեն դարձրել ջրել իրենց դաշտերը առատ և հոճախ, քան թե այդ հարկագոր ե, կարծելով, վոր ինչքան շատ ջուր տան հողին, այնքան առատ բերք կունենան: Բայց այդ, իհարկե, սխալ ե, վորովհետեւ ջրի ավելորդ քանակությունը նույնական վնասակար ե, ինչպես և նրա պակասությունը: Ան որինակ, մի զյուղում, վորտեղ ջուրը շատ ե, բամբակագործները առատուեն և հաճախ են ջրում իրենց գալարը, իսկ մյուս հարեան, գլուղում, վորտեղ ջուրը քիչ և, ջրում են չափավոր և յերբ այդ հարկագոր ե: Բերքը, թե մեկ գյուղում և մյուսում ստացվում ե միենալուն քանակությամբ, հաճախ ավելի առատ այն զյուղում, վորտեղ ջրի գործածությունը կատարվել ե թե չափավոր սահմաններում, ուստի յուրաքանչյուր բամբակագործ պարտավոր ե հետեւ բույսերին և ջրել այն ժամանակը յերբ դա կարենու ե, և չտալ բամբակին չորանալ և միենալուն ժամանակ չտալ նրան ավելի շատ ջուր, քան այդ պահանջվում ե: Բամբակագործերից շատերը ասում են, թե ջրի ավելորդ քանակությունից բամբակը չի վնասավի: Բայց այս ճիշտ չե: Բամբակը չի սպատկանում այն բույսերի շարքին, վորով շատ են սիրում ջուրը, նա պահանջում ե ջուրը չափավոր, և յեթե զու նրան տաս ավելորդ ջուր, գրանով բամբակը կըսկսե արագորեն տալ ճյուղեր և տերեներ, և թեև նրա վրա կ'լինի շատ կնգուղներ (ԿօրօնօԿԱ), սակայն դրանց մեծ մասը չի հասունանում, իսկ մյուս մասի հասունանալը ձգձգվում ե: Նայում ես դաշտին և կարծում ես, թե ամեն ինչ լավ ե, մինչդեռ բերքը հավաքվում ե քիչ: Ավելորդ ջուրը վնասակար ե այնպիսի հողում, վորը շատսակավ ե ծծում ջուրը, վորովհետեւ այդպիսի հողի մեջ ջուրը գծվարու-

թյամբ ծծվելով, մնում և բամբակի տակ և վերջինս սկսում է վնասվել:

Աչքի առաջ ունեցիր, վոր բամբակի ջրելը յերկծայրի սուր և, վորի հետ հարկավոր և շատ զգույշ վարպետ:

Ի՞նչպես վորոշել, թե յերբ և հարկավոր ջրել բամբակը. Յեթե վաղ առավոտյան տեսնես, վոր բամբակի տերեները թյուղ կախված են, դա նշան է, վոր բամբակը պահանջում և ջուր և հարկավոր և ջրել. Բայց կարելի յե ջրելը հետաձգել մի քանի որ հետո, յեթե բամբակի տակի չորացած հողը լավ փափկացվի:

Վորպես զի կարելի լինի ստանալ լավ և առատ բերք, հարկավոր և վորոշել ջրելու ժամանակը: Բայց ի՞նչպես վորոշել ջրելու ժամանակները, յերբ սկսել ջրել և յերբ վերջացնել: Առաջին կանոնը, վորը պետք է խմանա յուրաքանչյուր բամբակագործ, այն և, վոր նա պետք ջրել դաշտը մինչև ցանքս կատարելը:

Դրանից հետո, յերբ դաշտը այնքան կը չորանա, վոր հողը ցեխի նման չի կպչի գութանին, հարկավոր և վարել և անմիջապես ցանել բամբակը, վորպես զի հողը չ'ը չորանա:

Ցանքսից առաջ դաշտի վարելը կ'ապահովի լավ ծաղկում և թույլ կ'առ քեզ հետաձգել առաջին ջրելը և ջրել անմիջապես բամբակի ծաղկելուց առաջ: Իսկ այդ շատ կարեռ և, վոր ջանել բամբակը մի փոքր տանջվի առանց ջրի, վորպես զի նա ավելի խոր մտցնի իր արմատները հողի մեջ, վորի շնորհիվ նա ավելի լավ կըզարգանա և կըտա լավ բերք:


Հետագայում ջրելը հարկավոր և կատարել զլխավորապես բամբակի ծաղկման շրջանում:

Ողոստոսի 15-ից հետո բամբակի ջրելը, առնասարակ, ավելորդ և, և միայն շատ չոր տարիներում և այնպիսի տեղերում, վորտեղ աշնան ցուրտերը ուշ են սկսվում, ջրելը կարելի յե շարունակել մինչև սեպտեմբերի 1-ը: Հիշված ժամանակից հետո ջրելը վնասակար և բամբակի համար, վորովհետեւ այդ գեպքում բամբակի հասունանալը հետաձգվում և, շատ տուփեր գեռ չհասունացած ընկնում են աշնան վատ յեղանակի հետևանքով, վորով բերքի մի մասը վոչնչանում և բոլորովին, իսկ մյուս մասն ել ստացվում և վատ տեսակի և գնահատվում և շատ եժան:

Ռւեմին յուրաքանչյուր բամբակագործ միօտ պետք և լավ հիօն հետեւ ավագանութեան:

1. Մինչև ցանքսի սկսելը հարկավոր և մտածել ջրի մասին.
2. Մի խնայիր քո աշխատանքը ջրանցքների և նրա հետ կապված բոլոր ձեռնարկությունների լավ պահելու մեջ, վորպես զի խուսափես չորությունից.
3. Լավ պահիր ջուրը և խնայողաբար ծախսիր նրան.
4. Լավ պատրաստիր գաշտը ջրելու համար և փխրացրու հողը ջրելուց հետո.
5. Յեթե ցանկանում յես ունենալ առատ բերք՝ ջրիր բամբակը միայն այն ժամանակ, յերբ դա պահանջվում և և մի կտոր ջուրը, յերբ հարկավոր չե և վնասակար եւ:

Խճեներ Գ. Մանուկարով.



Անգրկովկառաց Ռամբակի Խոմիսեն Եռատառակել և  
հետեւյալ զբույկները

I. ԾԱ.Ժ.Ե.

ԲԱՄԲԱԿԵՆՈՒՄ ՄՇԱԿՈՒՄԸ ԵԽ ԽՆԱՄՔԸ

- Հ 1. Բամբակենի պարաբացնելը բերքի առատացման նպաստավոր պայմանն է—Պ. Մեղվեդեվ:  
Հ 2. Ինչ և հարկավոր իմանալ բամբակապործին ջրի մասին,  
վորպեսզի ստանա լավ բերք—Ենթիներ Գ. Մանուչառվ:  
Հ 3. Ինչու շարքով ցանքը լավ և ցրիլ ցանքից—Սպրոնմ Շ.  
Զելլից:  
Հ 4. Ինչու և անհրաժեշտ հողի փխրումը բամբակի մշակման  
համար և ինչումն և կայանում նրա ոգուար—Սպրոնմ Շ.  
Քոլգուչին:  
Հ 5. Ինչ վկաս են հացնում վայրի խոտերը և ինչպես նրանց  
հետ կովել—Պրոֆ. Պ. Ժուկովսկի և ազգունուն Ե. Ալեք.  
Հ 6. Բամբակարույժ հիշիր կենինի լողունզը՝ «Լավ և քիչ բայց  
լավ»—Սպրոնմ Շ. Տարատինով:


II. ԾԱ.Ժ.Ե.

ԲԱՄԲԱԿԵՆՈՒՄ ՎԵԱՄԱՏԱԽՆԵՐԸ ԵԽ ՀԵՎԱՆԴԻԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հ 1. Կոկուզի վորպը—բամբակարույժի ամենամեծ թշնամին է—  
Ենթոմորգ ՅԱ. Պրենց, հանբամատչելի փոխազրություն  
ազրունուն Ե. Ալեքիք:  
Հ 2. Ինչ բան և չուը և կոիզ նրա հետ—Պրոպ. Փ. Զայցեվ:  
Հ 3. Ինչպես կովել բամբակենու վոճիլի հետ—Ենթոմորգ ՅԱ.  
Արխանցելսկի:

Ա. Մ Ե Ն Մ Ա Գ Ր Վ Ո Ւ Յ Ն Հ Ա Ր Ա Ն 10 Կ Ա Գ.

Անզրբամբակենմի գրքույկները կարելի և ստանալ արջա-  
նային ազրունումներից և մասակա զործարաններից կատ-  
պնման կայաբաններից:



ԳՐԱՆ Ե 10 409.

2013



